

Ե Ս Տ Ղ Ի Կ

Ե Ր Ե Ի Ե Լ Ե Լ Ե

Փ Ր Ա Պ Ր Ր

Բ Ե Ր Ո Յ Ե Լ Ե Բ Ե Լ Ե Լ Ե Լ Ե

Տ Ե Տ Ե Լ Ե Լ Ե Լ Ե Լ Ե Լ Ե Լ Ե Լ Ե

Ե Տ Ա Ր Ի Ի Թ Ի Ի Ե

1855

Մ Ա Տ Ի Վ 1

Բ Ե Ր Ո Յ Ե Լ Ե

— 000 —

Ս արդ ընկերական ըլլալով քա-
ղաքականութեան մէջ հաղորդական
գործողութեամբ յարաբերու թի ունի
իրարու հետ։ Եւ ասանկ յարաբերու-
թեամբ երբեմն թշնամանք իրարու
հետ կը հակառակին ասելով թեամբ։
Եւ երբեմն ալ համահունչ մտաբան խոր
հղորով կը բարեկամանան մէկ մէկու
հետ սիրով։ Եւ երբեմն կերպ գործա-
ղութենէն կը ծագին թե օգուտ եւ
թե վնաս, կամ անձին եւ կամ պտու-
տի անուան։

Իսկ սոսկիսի դէպքերու մէջ
թշնամանք եւ թե բարեկամութիւնը,
կամ ի վնաս եւ կամ յօգուտ, երկու
եղանակաւ կրկան։ որովհետեւ դորձ-
քով կը կատարին երկուքն ալ, որ մե-
կը հանրական հայեցումն ունի բոլոր
մարդկան յօժարութեան, կամ ու-
նեղ արտոյտէի համութեանը, եւ կամ
անուից զգուելի արհամարհանալով։ Եւ
միւսը մասնական հայեցումն ունի մի-
այն մէկ մարդու մը համութեան,
կամ ներհանական խորհրդով, եւ կամ
համեմել յօժարութեամբ։ Ստանական

գործոց թէ թշնամանաց և թէ բարեկամութեան սկզբունքները թէպէտ բազմադիմի եղանակաւ կրլան, բայց գլխաւորապէս երկու սկզբունքով կը կատարին: Այժմ իրօք բարերարել ուրիշին, և գովաբանել անիկա: Եւ մէյմ'ալ վնասել մէկուն, և վատաբանել անիկա:

Ահա այս երկու կերպ հիմնական սկզբունքով կը կատարի մասնական գործոց յարաբերութիւնը, թէ թըշնամանօք և թէ բարեկամութեամբ երկու մասնաւոր անձանց մէջ:

Այլ հանրական գործոց՝ թէ թըշնամանաց և թէ բարեկամութեան, ու անով ամէնուն հաճութիւնը շարժիլ, կամ 'ի սէր և կամ յատելութիւն, երկու կերպ հիմնական սկզբունքէ կը ծագի. մէյմը ամէնուն ներքին հաճութեանը համաձայն ըլլալ, ու միւսն ալ ամէնուն ճանաչման հակառակ գործոց հետեւիլ:

Ամէնուն ներքին հաճութեանը համաձայն գործոց հանրական բարեկամութեան հիմնական սկզբունքը՝ երկուք միայն են: Այժմ թէ խօսքով և թէ գործքով հաւատարիմ ըլլալ, առանց կեղծեալ պատիւ խաբէութե: Եւ երկրորդ՝ ոչ զինքը վնասել ուրիշին խաբէութիւն, և ոչ ուրիշը վնասել անիկա խաբէութիւն: այլ խաղառ անվնաս ըլլալ, որպէս իր անձին, անանկ ալ սուրիշին:

Այլ ամէնուն ճանաչման հակառակ գործոց հետեւութեան հանրական թշնամանաց հիմնական սկզբունքը չորս կերպ գործքերէ կը ծագի: Առաջին. միշտ որ հետեւի կախարդական հմայլոց և գուշակողական պատիւ խաբէութեան, ու անկէ երջանկութիւն ինչ յուսալ անձին հարստութեանը համար:

Արովհետեւ ամէնուն ճանաչման հակառակ ըլլալուն, ամէնքնալ միապէս գործողը կարհամարհենու վայրենամիտ

ռամիկ սեպելով կը զըռնին անկէ: Երկրորդ՝ մոլորամիտ անմըտութեամբ աշխատիլ միշտ բիմիական խաբէութե. փոխարկելու ջանալ պղնծը իսկական սակի ըլլալու:

Երրորդ՝ կեղծ բարեպաշտութեամբ (սօփիստութեամբ) կրօնամոլ ըլլալով իր անձը ընտրեալ սեպել ուրիշին առաւելորբապահ, և ուրիշները արհամարհել. որպէս թէ կրօնական սրբապահութիւն չունին, որպէս ինքը ունի:

Չորրորդ՝ անկրօնութիւն յիմարական. որ վատաբանութեամբ հաւատալեացն կ'արհամարհէ հաւատացեալները իբրեւ խօթամիտ ամբօխ ռամկութեան. եւ հաւատոյ յայտնութեան պատգամները ցնորք սեպելով կեղծեալ խորհուրդ կը ճանաչէ իր մտացը մէջ: Ահա այսպիսի չորս կերպ անզգայ թանձր տգիտութեան պաշտմունքովատելի կրկոյ ամէնուն առջին յիմարական անմտութեամբ ցնորածի մը պէս:

Ի պահպանական վայր լեռնաշխարհի անհրաժեշտութիւն:

Ֆիլիքայ Պօղոս:

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԲ

Ի ՎԵՐԱՅ ԲՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՁԻՆ

ԳՐԻՍՏՈՍԻ

Խոստովանեալ գաւանութիւն հաւատոյ յուղղափառական ճշմարտութեան գիտէ 'ի Քրիստոս երկու բընութիւն լինել Աստուծոյ և մարդոյ յանձառելի անշիթթ և անկորուստ միաւորման անդ 'ի մարդեղութեան խորհուրդ փրկութեան աշխարհի առ 'ի մեղացն ծանրաբեռնեալ կործանման ներքին 'ի յանդնդային վայր կորուստեան: Այլ սակայն ներդրածական

չարժումն արարող ներգործութեանց երկուց բնութեանցն, մի ոմն էր 'ի Քրիստոս, և այն էր անձն բանին ծնեալ առ 'ի յաւիտեանց 'ի բովանդակ անհուն էութենէ մտացն հօր յանեղ էութենէ անտի նորա, իբրև համբուն իմաստութի ինքնագիտութեանն 'Աստուծոյ 'ի համբողջ ինքնագետ ճառաչման անհուն էութեան 'Աստուծութեան : 'Եւ վասն զի առ 'ի հօրէ յաւիտենական ծննդեանն յանժամանակ անեղ գոյութեան մտաց նորա, դաւանի երկիրպագեալ խոստովանութեամբ հաւատոյ 'ի հաւատացերոց, **ՈՐԴԻ ԱՍՏՈՒԾՈՅ** : Քանզի այս է համաչափ պատկեր բովանդակ անհուն էութեան 'Աստուածութեան հօր, իբրև հաւատարեալ իմացումն իմաստութեան ինքնագետ ճանաչման յանհուն բովանդակութեան անդ : 'Եւ զի է նկարագիր իմացմունք ճանաչման ինքնախորհուրդ մտաց 'Աստուածութեան Հօր ինքնագիտութիւն անեղ էութեան իւրոյ, որով 'Աստուած զինքն 'ի յաւիտենից ճանաչէ, այնու և զյաւիտենան արար յամենայնի 'ի գոյաւորեալ ստեղծականն, որ ինչ 'ի աիեղերս են բովանդակութիւն էից ամենայնի, թէ յերկինս և թէ յերկրի, և որք երևելիք իցեն 'ի նկատական մարմնեղ թանձրութեան, և որք աներևոյթ յաննիւթական թափանցող վճիռ պարզութեամբ իմանալի գոյութեան, որք իմացմունք բնաւ իցեն յիմաստութեան աշխարհի 'ի զանազանեալ ցոյցս գոյաւորեալ տեսականութեան նոցա : Քանզի ամենայն ինչ նովաւ եղև, մինչդեռ ինքնագիտութիւնն ճանաչէր 'ի յաւիտենից միտաւորական ինքնախորհուրդ իմացումաձովք յիւրմէ անեղ էութենէ միտացն ծնեալ իմաստութեամբ իւրով, թէ անեղ էութիւն իւր յանհուն բովանդակութեան անդ բնաւ է զօրութիւն ամենակարող ուր թէ ձգիցի

յանսահման անարգել տարածութիւնըն իմացմունք իմաստութեանն անդ յայնմ հաւատարեալ զուգընթացութեամբ յանսահման տարածի աննահանջ անգարձ զօրութիւն իւր ամենակարող : 'Այա իմաստութեամբ իւրով ծանեալ զամենակարողութիւն իւր, և ամենակարողութեամբն գոյաւորեաց զիմացմունս իմաստութեան յարարչագործութի էից ամենայնի ստեղծագործութեամբն յանպարաստ նիւթոյ յոչէից : 'Եւ այս է անձն բանին 'Աստուծոյ 'ի պատգամ փրկութե հաւատոյ 'ի դաւանեալ ուղիղ խոստովանութեան անդ իբրև ծառայական իմացումն իսկութեան 'ի յայտարար ցուցումն ճշմարտութեան նայնական միոյ անձն Քրիստոսի և գոյոյ **ՈՐԴԻ ԱՍՏՈՒԾՈՅ** նորա : 'Եւ զի այս միայն էր ինքն առանց զուգախառն հաւատարեալ գոյութեան այլոյ ուրուք 'ի մարդեղութեան անդ, զոր 'ի կուսէն էառ որ ինչ է 'ի մարդ սահմանեալ արարչագործ գոյաւորեալ բնութեան նորա, զի 'ի մերս կերպի նրմանեալ մարդկութեամբ իւրով կատարեր զհանդէս փրկութեան զամենայն մարդավայելուչ ներգործութիւնն հնազանդեալ պատուիրանաց Հօր փոխահատոյց իրաւամբ արդարութեանն 'ի փրկութիւն անհնազանդութեան մեղաց 'Առամեան մարդկութեան : 'Ասանորոյ երկրորդ եղև յետ նախամարդոյն իբրև սկիզբն փրկեալ բաղմութեան, որպէս ամենեքին 'Առամեան մեռան 'ի մեղս անհրանազանութեան, ուր ընդ անիծիւք կնքեցան ամենեքին գերեալ ընդ թաւաւորութեամբ մահուն յաւիտենից, այսպէս և ամենեքին իբրև նորաւարած 'ի չքնաղ նախաբուն անեղծ նմանութեանն ընդ պատկերի 'Աստուծոյ ընկալան զյաւիտենական կեանս անմահութեան հոգւոյն հնազանդութեամբ պատուիրանացն, զի յանձն

իւր սպան զմեզս հակառակեալ թշնա-
մունեն : զի մահուն իւրով խափանեաց
զայն , որ զիշխանութիւն մահուն ու-
նէր ընդ դատակնիք Աստուածատաստ
վճիռն անիծից 'ի դատապարտութիւն
մարդոյն փասն յանցանաց նորա . և ընդ
հօր հաշտութիւնն քաւութեամբ մե-
ղաց մարդկան կամաւ որական հնազան-
դութեամբ ընդ դատակնիքեալ դատա-
պարտութիւն չարչարանաց կանխա-
վըճիւ մահու մեռանելոյ , նուիրէր
իբրեւ զոհ փրկութեան զմարդկու-
թիւն իւր 'ի չարչարանս նորուն
'ի դիմաց ամենեցուն . զի արդարու-
թիւնն կատարեսցի յօրէնս իւր 'ի
փոխադարձ կնքեալ ուղղութեանն :
Արպէս թէ ամենեքին համահաւայր
ներկայութեամբ ընդ նմա 'ի նա յա-
ղագս զուգակցորդ հաղորդական միա-
ւորութեանն ընդ մարմնոյ նորա կրօ-
նական խորհրդով յընթրիս սեղանոյ
իւրոյ . որով մի հաց և մի մարմին եմք
բազումքս ընդ նմա 'ի նմա , և ընդ
այսց անձառ միաւորմանն ընդ նմա մի-
ութեամբ ամենեքին դատապարտեալք
եղեն կամովն հնազանդեալք ընդ դա-
տակնեալ կանխավճիռ դատապար-
տութեան մահու մեռանելոյ . զոր ա-
նիծիւք կնքեաց Աստուած առ անհր-
նազանդութեան մեղացն Ադամայ զա-
մենայն սերունդս նորա . որ 'ի համ-
բուն մարմին նորա բովանդակեալ էին
համաժողով բազմութեամբ ինքնա-
ծնունդ սերնդեան իւրոյ , 'ի բաց մեր-
ժիլ յԱստուածատես փառաց փառա-
ւորեալ երանութեանն :

Ուստի ընդ միոյ նոյնապոյ ան-
ձին բանին Աստուծոյ , նոյն մի ոք էր
'ի Քրիստոս ներգործական շարժումն արա-
րող ներգործութեանց երկաքանչիւր
բնութեանցն : Օ՛հ զսեպհական հա-
մադատչանն է որ Աստուածային ,
որ Աստուածայնոյն բնութեան նորա
էին ներգործութիւնք . և է որ մարդ-
կային . որ մարդկայնոյն բնութեան

նորա էին արարք ներգործութեանց :
Եւ աւասիկ զերկաքանչիւր սեպհա-
կանեալ յատուկոն նոցին , որք բնա-
ւորական եութեան նոցանց իցեն յօ-
ժարեալ ներգործութիւնք դործոյ ,
ինքն միայն էր 'ի միաթիւ անձին իւ-
րում , և ինքնախորհուրդ կամօք
հաճութեանն՝ ներգործէր զնոսա՝ նո-
վին անձնական միաթիւ շարժմամբ :
Օ՛հ ոչ այլ ոք 'ի նմա էր քան զնա ,
այլ նոյն ինքն յինքեան միայն էր :
Հայտ միա և Վիւրեղ դաւանեաց 'ի
Քրիստոս մի բնութիւն , ցուցեալ
անդ նովառ ոչ զբնութիւնն 'ի վերա-
ցեալն տեսական նշանակութեամբ
նոցա . ըստ որում մին Աստուածու-
թիւն և միւսն մարդկութիւն : Այլ
անդ պարզապէս առանց համաղոյգ կը-
ցորդութեան այլոյ ինքնութեան ընդ
դէմ չարազանդ հայհոյեցի մարդու-
թեան երկուց ոմանց թանձրացեալ մը
տօք խօստովսնութեանն Աետորի
զանձնական միութիւն Քրիստոսի նոյ-
նութեամբ բանին Աստուծոյ , որ մի
ինչ էր 'ի նմա իբրեւ թանձրացեալ
անձնաւորական երկակայութիւն եր-
կուց բնութեանց : Եւ 'ի նմա անդ
մի ինչ էր ներգործական շարժումն ,
որ է արմատական հիմն անձնական
գոյութեան յինքեան լրացեալ Աս-
տուածութեան նորա : Քանզի ներ-
գործութիւնք բնութեան 'ի շարժող
զօրութենէ անձին , է 'ի կանոնեալ օ-
րէս աշխարհի . անձն է , որ շարժ-
մամբ իւրով ներգործէ . և բնութիւն
նրն շարժեալ յանձնէ , յառաջ բերէ
զներգործութիւն իւր : Այսա մի բը-
նութիւնն 'ի Քրիստոս ըստ դաւա-
նեալ ուղիղ խօստովանութեանն Վիւր-
ղի թանձրացեալ մտօք փոխանակ միոյ
անձին նորա , ուղիղ է 'ի խոստովա-
նեալ դաւանութեան հաւատոյ : Այն
պէս և ուղիղ է երկու բնութիւնն 'ի
Քրիստոս վերացեալ նշանակութեւ
իբրեւ Աստուածութիւն և մարդկու-

Թիւն , ընդդէմ չարազանդ մոլորութեանն Լէւոնքեայ միոյ տեսականութեան յերկուց փոփոխմամբ շփոթեալ իսկութեանց : Օ՛ր ոչ մի եղեն երկրբեան յսքանչելի միաւորման անդ շնչփոթմամբ այլայլութեանն , այլ անկորուստ 'ի նմին անդ միոյ անձին Քրիստոսի եղեն պահեալ զամբողջութիւն երկուց բնութեանց ընդ բնաւորեալ սեպհական նշնութեան էութեանցն : Քանզի երկրբեան բնութիւնը ընդ սերտ անբաժան միաւորման անդ բնաւորական զանազանեալ յատկութեամբն իսկականօքն երեւ էր 'ի Քրիստոս : Այ իբրեւ թէ կրկին որ էր 'ի նմա Թանձրացեալ մաօք : Օ՛ր թէ մարդկութիւն էր իսկապէս , այլ ոչ իսկութեամբ մարդկութիւն նորին ինքեան ունէր զգոյութիւն իւր իբրեւ ինքնութիւն մարդկութեան , որպէս թէ 'ի նմին անդ մարդկութե՛ւ սւրբն յ'Պտուածութենէն ունիցի զինքնութիւն իւր իբրեւ խարխոս հատտաւութե՛ւ նորա : Այլ մարդկութիւն նորա Թանձրացաւ 'ի գոյութեալ բնութեան անդ յանձն բանին Լստուծոյ : Աւր ինքնութիւն երկուց բնութեանց՝ միայն մի որ էր 'ի Քրիստոս : Եւ այն էր անձն բանին յիմաստութեան Լստուծոյ Հօր 'ի պատգամ յայտնութեան փրկութեան հաւատոյ , միոյ որդւոյն Լստուծոյ Հօր անձնաւորութիւն իսկական միաթիւ ինքնութեան :

Այլ ոչ թէ յերկուց բնութեանց մի լեալ , իբրութե՛ւ յետ անբաժան միաւորութեան անդէն ընդ նմին բողեանայր յերկուց անտի ինքնութիւն միութեան նորա յանբողեական լրութիւն անձին : Օ՛ր յառաջագոյն ունէր զինքնութիւն իւր յ'Պտուածութեան անդ քան զանհառ միաւորութեան ընդ մարդկութե՛ւ իւրոյ , նովին և պահեաց զնա յետ միաւորութեան անկորուստ և անփոփոխ նշնութե՛ւ կանխաբուն միութեանն : Այլ այն

էր անձնաւորութիւն բանին Լստուծոյ 'ի Քրիստոս ճնունդն յառաջ քան զյաւիտեանց առ 'ի հօրէ , յիսկութենէ էութեան մոտայ նորա , նովաւ և բովանդակ անեղծ եղև յետ միաւորութեան 'ի մարդեղութեան անդ : Այսնորոյ և որ էառն 'ի կուսէն զմերթ բնութիւն , և որ զամենայն մարդկոյնսն կրէր կամաւորաբար ինքնահաճ խորհրդով 'ի փրկութիւն մարդոյն , նոյն ինքնութիւնն էր առ 'ի լսկրդեանէ յ'Պտուածութեանն : Աստի ոչ յերկուսեան ոմանս անձնաւորական մաօք յ'Պտուածութեան իցէ ինքնաբար գործս Լստուծոյ , և ոմն 'ի մարդկութե՛ւ լինել որիչ յ'Պտուածութենէ , նորուն իսկ լինել աւարտած մարդկութեան : Այլ միոյ և նոյնոյ ինքնութեանն , որ յ'Պտուածութեանն էր իսկապէս յառաջ քան զամենայն յաւիտեանսն , բնաւ վերածէին երկաքանչիւրոյ յատուկ և սեպհական ներգործութիւնքն նովին միով կամօք աղանաբար ներգործեալ զգարմանաբանչ գործս հրաշից , և զվարդապետութեան պատգամն փրկութեան հաւատոյ , և որ մարդկայնոյն էին գոճք մարդկութեան : Աստի մի բնութիւնն ըստ Կիւրղի փոխանակ միոյ ինքնութեան , այն է փոխանակ միոյ անձնաւորութեան բանին Լստուծոյ ուղիղ է 'ի Քրիստոս 'ի խոստովանեալ դաւանութեան հաւատոյ ճշմարտութեան միոյ անձին նորա : Բայց մոլոր է և թիւր 'ի շփոթեալ կարծիս միաւորութեան փոփոխմամբ այլայլեալ 'ի մի իսկութիւն երկոցունց տեսականութեանց ըստ Լէւոնքեայ հայհոյելի չարազանդ յիմարական մոլորութեան : Այլ պահմամբ երկոցունց բնութեան անկորուստ և անփոփոխ մնալով յետ միաւորութեան 'ի նոյնութեան կանխաբուն տեսականութեանն , երկրբեանքն եղեն միոյ ինքնութեան բնութիւն , և նոյն մի ինքնութիւնն եղև

յերկոսեան բնութեան իբրև պարզապէս ներգործական շարժումն արտօշ ներգործութեանց երկուց բնութեանց, առանց շարազոյգ կցորդութեան հաղորդական մասնաւորեալ համազոյգ բաղադրութեան այլոց քան զինքն. որ յինքեան միայն էր իբրև իմաստութիւն համբուն էութեան Մտուածոյ Հօր, և յաւիտենական ծնունդ համաբոլոր մօտց նորա բովանդակութեամբ անհուն էութեանն. ըստ որում ինքնախօս վարդապետութեամբն վկայեաց զինքնութիւն միայն ձևաւորութեան իւրոյ իբրեւ ներգործական շարժումն արտօշ ներգործութեանցն յերկոսեան բնութեան անդ միօք լինիլ յասելն. « Եւ գնեմ զանձն իմ. զի միւսանգամ առից զնա : Բայց որ հանէ զնա յինէն, այլ ես դռնեմ զնա անձամբ իմով. իշխանութիւն ունիմ գնել զնա, և իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ ըզնա » : (Եօհ. Ժ. 17) :

Տարագիր Ք. Գ.

Ի կրօնս երկու ինչ է հաստատութիւն նորա. որք ասին, Պաշտամունք կրօնից, Պատուերք կրօնից : Պաշտամունք կրօնից ՚ի կրկին իմացմունս հաշին. Յերկիրագութիւն փառաբանական. Եւ ՚ի խոստովանեալ դաւաճութիւն. Հաւատոյ : Պատուերք կրօնից կարգին ՚ի սէր ընկերին. բարեբարել նմա, և անմխաս լինել ընդ նմա, և ներողամիտ գտանիլ յանցանացն որին :

Եւ գործք՝ որք արտաքոյ սոցինիցեն ՚ի կրօնականս, և այն է արարողութիւն ծիսական, և կամ սովորական օրէնք աւանդութեան նախնեաց : Եւ որ զկրօնս եղծանիցէ, է որ ռամկութեամբ յիմարական վարկածիւ անձին յանխորհուրդս առանց ցուցի իսկականութեան զամենեսին

առ ոչինչ համարի իսկամիտ սնտիկարծեօք անձին : Եւ է որ իմաստութեան կարէ զապացոյցս ունել հաստատութեան մտաւորական խորհրդոյն իւրոյ իսկականօքն իմանալ զանեղծութիւն հոգւոյն և զանմահ բնութիւն նորա. Թէ զիմարդ յերկինս փառաւորիցի նովաւ, կամ ո՞րպէս յանդունդն անարգիցի տաքնապաւ : Եւ այսպէս յանհանդարտ միտս իւր վարանի քտանել զհղօր ապացոյց իսկականութեան նորա, Թէ զիմարդ հոգին անեղծ յինքեան իցէ : Եւ մինչդեռ ոչ կարէ գտանել զայն, և ահա անդէն կարծ ՚ի կարծ վարկածիւ անձին եղծանէ զաւետիս կրօնից ՚ի ստոյգ վկայութիւն նորա զանմահութենէ հոգւոյն :

Հաստատուն դրութիւն յանեղծութիւն հոգւոյն :

Չիք գոյութիւն ինչ յաշխարհի առանց եղանակի հանգամանաց : Եւ են հանգամանք ինչ առանց գոյութեան : Եւ առ ՚ի միմեանցն զանազան եալ տարբերութիւն սոցա : Թէ հանգամանք իրօք ազգեացեն այլոց զներգործական շարժմունս, գոյութիւն նոցա է իրական. և հանգամանք նոցին գոյաւորք : Իսկ Թէ հանգամանք ոչ զներգործութիւնս ինչ իրօք ազգեսցեն այլոց՝ գոյութիւն նոցա է սոսկ ցուցիլ երեւութի ստուերաց, առանց իրական գոյաւոր էութեան : Որպէս շարժմամբ ծառոյն շարժի և ստուեր նորա. այլ շարժումն ստուերին ոչ ընդ շարժիլն իւր գլորէ զսափսն, մինչ շօշափմամբն շարժի զնովաւ : Եւ ոչ հուրն ճայթուցանէ զապակին հայելու մինչ ՚ի նմա երևիցի բոլորքմամբ բոցոյն վառեալ ՚ի պատկերացոյց հրնոցն նորա : Եւ ոչ ծանրանայ հայելին. մինչ լերինք ՚ի նմա երևիցին :

Եւ գոյութիւն հոգւոյն է իրական ինչ ինքնին յինքեան անկախ յայլմէ, ոչ Թէ ամբողջութիւն իւր ՚ի նմանէ անտի իցէ : Ու ՚ի հանգամանաց ճա.

նաջման և յօժարութիւն նորա , թէ
ի խորհուրդս իցէ , և թէ ի կամս ,
շարժին իրօք ներգործութիւնք ազդե-
ցութեանց յարտաքին իրս պայտյու-
թեամբ նոցա զգայարանօք անձին :

Եւ ոչ է եղանակ ինչ սրտածառեալ ի
շարժմանէ արեան : Քանզի արիւնն
ոչ զինքն շարժէ , և ոչ ինքնին շարժի
ապա թէ ոչ ի շարժմանէն ոչ դադա-
րէր երբեք , թէ շարժումն էր յէս-
թենէ նորա : Եւ արիւնն շարժի մի-
այն կրաւորական շաժմամբ ի ներգոր-
ծական ազդեցիկ արմատական շարժ-
մանէ հոգւոյն : Առաի արիւնն դա-
դարի ի շաժմանէն , և պատճառի ան-
դէն մահ նորա , որ է փշոռումն ամ-
բողջական բովանդակեալ մասանց կաղ-
մութեան մարմնոյն , մինչ հոգին մեկ-
նեցի առ ի նմանէ : Եւ մանաւանդ
հոգւոյն էութիւն է գոյութիւն շարժ-
ման . և գոյութիւն իմացման : Աս-
նորոյ ուր և ինքն իցէ , ունի զինքն ի
նոյն ընդ շարժման և ընդ իմացման :
Օր սոքին են յէսթենէ նորա : Եւ
թէ յանջատին ի մարմնոյն , դադա-
րէին ի նմա շարժումն և իմացումն .
այնուհետեւ և ինքն կորուսանէր ըզ-
գոյութիւն իւր իրական նոյնութեան .
և ի յոչինչն դառնայր անդէն :

Եւ քանզի յարաշարժութիւն աչ-
խարհի ոչ զմի ինչ կորուսանէ երբեք
ի բովանդակեալ ամբողջական նոյնու-
թենէ տիեզերական կաղմութեան :

Եւ միայն թէ պաշտօն նորա յան-
նահանջ օրէնս բնութեան աշխարհի ,
է պայտյութիւնն յարաշարժ , կամ ե-
ղանակաւ գոյափոխ պայտյութեան ,
և կամ եղանակաւ տեղափոխ շարժ-
մամբ :

Եւ հոգին իբրեւ էակ աննիւ-
թական յիմանալի էութեան անդ , ոչ
գոյափոխի էութիւն նորա պայտյութեան
ընդ նիւթական թանձրութի մարմնեղ
գոյութեան : Այլայն թէ տեղաշարժ
պայտյութեամբ փոխէ զվայր իւր ի

ներգործական շարժումն էութեան
իւրոյ իմացմամբ ինքնադիտութեան
յայլ վայր սեպհականեալ նմին , ըստ
աստիճանական զանաղանութեան լու-
սափայլ մաքրութեանն թէթեւու-
թեամբն յերկինս , և զազիր աղտեղու-
թեան խանձոտ եալ հրանիւթ արեան
մարմնոյն նսեմութեւ ծանրութեամբն
հակեալ յանդուհեղ երկրի : Օր
Քրիստոսական կրօնքուղի զհրահանգէ
բարոյական պատուիրանօքն ոչ զազա-
նալ աղտեղութեամբ մարմնոյն ի վըճ-
իտ մաքրութեան անդ լուսափայլ սր-
բութեան էութեան հոգւոյն ըստ
նոխաստեղծ արարչաբիծ ամբողջական
կատարելութեան նորա ըստ համբուն
նմանութեան պատկերի Տեառն :

Տարազիր Փ . Գ .

ԸՕԳԵՅԻՆ ՅԻՇԸՏԵԿԵԼԵՆ

Համառօտ դատմութիւն երանկան մահուան եւ
մեծահանգեա թոցման տգլխաւր Տ . Տ . Թորոսի
Սրբազան կաթողիկոսի մեծափառ տան կիւիկիոյ :

Որ ի Թուին Ռ Ճ Զ . յԱ . 29 :

Սրբազան Հայրապետի մահուան
վաւերական պատմութիւնը թէպէտ
և Հայոց պատմութիւնը համառօտաւ
բար կը յիշէ , բայց Լանկայու Ս .
Սարգսի Եկեղեցւոյն մէջ (որ այժմ
անձանօթ եղած տուն մըն է) գրու-
թիւն ընող տասն և երկու տա-
րեկան հացագործ տղայ մը Սուլթան
Իպրահիմայ թագաւորութեանը վեր-
ջին տարիներէն սկսելով մինչեւ Դ .
Սուլթան Ահմէտի սի չորեքտասան
երրորդ տարին , իւր կենդանութեան
ատենը Կ . Պօլսոյ մէջ պատահած
գէպքերը ժամանակակից տեղեկու-
թեամբ ի գիր արձանագոյցած ըլլա-
լով երկարօրէն կը յիշատակէ , որուն
բուն ձեռագիրը Սամթիոյ Ս . Սա-
հակեան թանգարանին մէջ անեղծա-

նելի կեցած է . ուրիշ Թանգարանին վերատեսուհները ծաղկաբաղ հաւաքելով բանասիրաց ծանօթութիւն մը տալու համար համառօտակի կը հրատարակէ , և այս հոգեւոր Հօր շիրի մը որն որ երկար ժամանակէ հետէ իբր անձանթ մնացած ըլլալով, աղգասերին մէկը բարեբաղդութիւն քանելով նորաչէն մահարձանով ու տապանագրով լստ արժանոյն շքեղացոյց : Եւս առթիւ շիրմին քովերը երկած երեւելի արանց գտնուած գերեզմաններն ալ կը հրատարակենք :

« Ի ՌՃԳ . նոյեմբեր 29 լուեղեւ թէ Կաթողիկոսն Սայ վախճանեցաւ . և եղին 'ի տեղի նորա զԹորոս վարդապետն Սեբաստացի : . . .

» Ի ՌՃԵ . հոկտեմբեր 6 օրն երկուշաբթի եկն թորոս Կաթողիկոսն Սայ յԱտուածածին եկեղեցին : .

» Ի հոկտեմբեր 17 ուրբաթ գընաց Աթորէնէ առ Թագաւորն վասն աղգային գործոյ իրիք :

» Ի դեկտեմբեր 1 երկուշաբթի եկն Աթորէնու :

» Ի դեկտեմբեր 11 հինգշաբթի ընդհանուր աղգային ժողովարար , վասն խռովութեանն օր կայր 'ի մէջ Յօհաննու Սուղնեցւոյ , Ռուհիճանայ Սանեցւոյ և այլոց անդակալաց և բազում ջանիւք խաղաղացոյց պատժելով զՍուղնեցի () հանն զվարդան Տարապանաձին և Օտտուածատուր Պարմասուղն :

» Ի ՌՃԶ . ապրիլ 22 չորեքշաբթի օրս հոգեւոր Տէրն 'ի սուրբ Անկողոս եկն (Սանկայու) նաւով 'ի Պալատէ և հիւանդ էր , ապրիլ 29 չորեքշաբթի 'ի լուսանալ առաւօտուս 'ի պահու ժամուն զոր փառք 'ի բարձունս տակաբ աւանդեաց թորոս Կաթողիկոսն զհոգին իւր առ Ատուած զուարթ երեսօք : Եւ 'ի հինգերորդ պահու ցերեկին , Սարաիբոս վարդապետն (Կաֆայի) եկն Աթուսաղէմայ :

» Եւ մեր լեալ 'ի սուրբ Անկողոս մօտ 'ի վախճանելն ոչ կարացաք գընալ ընդ առաջ նմա , այլ 'ի քահանայիցն որ անդն կային յղեցոք առ նա 'ղի եկեօցէ առմեզ , և նոյն ժառմայն եկն և խաչատուր վարդապետն և թադէոս Կաթողիկոսն և Վաղար վարդապետն եկեալ ժողոս վեցան 'ի Թաղումն երանելոյն , և 'ի հասարակել աւուրն զկարգն ըսկըսոք պաշտել մինչ 'ի մուտս արեւուս տանելով զնա 'ի մէջ եկեղեցւոյն և զգիշերն անդ թողեալ պահէին զնա հաբեղայք նորին և աշակերտս ըն , և 'ի հասարակել գիշերոյն երեալ քնացաք յեկեղեցին և ասաք զսողման և օրհնեցաք զժամն և չորս քահանայք յաջմէ և յահեկէ զսուրբ Եւտարանն սկսան կարգալ մինչ 'ի լուսմն ժամին և Տէր Սարկոս կրօնաւոր նորին արար ըզպատարագն փրկական , և յետ պատարագին զգետաւորեալ ամենեքեան քահանայք մոմեղնօք և խնկօք և օմին , և ապա ել Սարաիբոս վարդապետն (Կաֆայի) ծանուցանել զաղէտ սուրբ Հօրն վախճանելոյ , սակաւ ինչ զի տարաժամեցաւ : Եւ ապա վարդապետքն բարձին ըզմարմինն մինչ 'ի դուրս եկեղեցւոյն և ապա հրամայեալ քահանայիցն զի բարձցեն և բարձին , և մեր յաջմէ և յահեկէ ասեաք զերգս չարականացն մինչ 'ի կամարն սուրբ Կէորգայ , որ անի վարի կամար հանդէպ բաղնիցն , և ոչ զոր թահին մօտիլ 'ի դապաղի յաշխարհա կանայց , այլ քահանայից միայն . վասն զի ամենեքեան անդ ժողովեալ էին 'ի սրտիւ Թաղման Լըսնեւելոյն :

» Եւ իբրեւ մերձ եղաք 'ի կամարն Սրբոյն Կէորգայ , ելին յեկեղեցւոյն քահանայք խնկօք և լապտերօք առաջի վախճանեալ սուրբ

Հօրն և տարաբ յեկեղեցին . և անդ
 արարեալ հանգիստ , և ապա ելաք
 յեկեղեցւոյն և գնացաք յառաջ 'ի
 վերնակամարն եկեղեցւոյն , որ առի
 փոքր Աստուածածին (որ այժմ Յու
 վակիմ և Ննա կոչի) և անդ ա
 րարեալ զհանգիստն և դէմ եդեալ
 մեր անցաք զքաղաքաւն և 'ի քաղա
 քէն ելեալ 'ի գերեզմանատունն մը
 տաք և յայնժամ քահանայիցն 'ի
 վերայ գլխոցն բարձեալ զմարմինն
 մինչ 'ի հանգիստ նմին որ և եդաք
 սաղմոսիւք և օրհնութեամբ և եր
 գօք հոգեւորօք և մեծ ամբօրիւք
 յեկեղեցւոյն անդ ամենայն քաղաքիս
 'ի պատու թաղման երջանկաշնորհ
 առն , 'ի մէջ երկոցունց գերեզմա
 նացն թաղելով , իշխանին՝ որում ա
 նուն է Լյրեմիա Յամիթ քաղաքէ ,
 և վարդապետին Յօհաննու Լոդե
 սացւոյ , որ և յիշատակ նոցին օրհ
 նութեամբ եղիցի և աղօթիւք նու
 ցին Տէր Քրիստոս մեզ ողորմեսցի ,
 և դարձաք 'ի վանս սրբոյն Վե
 որգայ : » (1)

Հին մահարձանն եդեալ է 'ի պատ
 ուանդանի յեղը թաղին 'ի կողմն
 Հիւսիսոյ ընդ գերեզմանաւ Յօհան
 նու Ուռհայեցւոյ : Տապանագիր սո
 րին հաղիւ ընթերցանի որ է այս :

« Հայրս այս էր գովելի , »

« հարանց մերոցն պատուելի , »

« Կաթողիկոս Կիլիկեցի . »

« Թորոտ անսւամբ ինքն կոչի : »

« Սա նման էր մեծ Երեստի . »

« լքեալ շնորհօք հոգւովն 'ի լի , »

« նման նմին ժամանակի , »

« եղեւ 'ի մահն կարճ հասակի : »

« եւ թէ գովեմ զսա յայտնի , »

« ինքն նման էր հրեշտակի . »

« յորժամ կանգնէր ժամ աղօթի , »

« եղանակէր զարմանալի : »

« Այսմ կարօտ է աղօթի . »

« Թէ ասացէք Տէրն ողորմի , »

(1) Աստ կատարի պատմութիւնն :

« եղեւ զրաւ ժամանակի : »

« ՌՃ . եւ Զ . Թուին »

Նորոգեցաւ յամի 1853

որոյ նորոգ տապանագիրն

է այս . Սահարձան Տ . Տ .

Թորոտի Սրբազան Կաթու

ղիկոսի Տանն Կիլիկիոյ :

« Քաղցր է , այո , առաքինեաց . »

« վեհ յիշատակ անմուաց : »

« քաղցր է և մեղ հալուապետիդ . »

« կանգնել դամբան բերկրամիտ : »

« լացին այս , սրտաճրմիկ »

« լացին զմահդ քոյդ որդիք »

« որ գահայիցդ զերծեալ աստի »

« 'ի յերրորդում սուղ ամի , »

« լքեալ զկենցաղս լաւ քեզ վարկար »

« զերկնից ընտրել Սրբոց պար : »

'ի Թուին ՌՃԶ . ապրիլ 29 րճի : »

Ի հարաւային կողմն այսր հանգս
 տարանիս է գերեզման Լյրեմիայի Ամ
 թեցւոյ իշխանի հայր Սաղաքիա չե
 լեպոյն , որ մեռաւ 'ի Թուին հայոց
 ՌՃ :

Լրեւելեան կողմն է ռուհիջանայ¹
 իշխանի որ մեռաւ 'ի Թուին հայոց
 ՌՃԹ :

Եւ Ստեփաննոսի մեղրցոյ պատրիար
 գին Պօլոյ որ վախճանեցաւ 'ի Թու
 ին հայոց ՌՃԻԲ :

Հիւսիսային կողմն է Յօհաննու Ե
 պիսկոպոսի ռուհայեցւոյ որ փոխա
 նորդ էր Կիրակոսի պատրիարգին , 'ի
 Թուին հայոց ՌՃ :

Նաև այս շիրմին հիւսիսային կող
 մը Սամաթիոյ Սուրբ Վերգ եկե
 ղեցւոյ սպասաւոր տէր մարտիրոսեան
 Տէր կոմիտաս աւագ երիցուն մահար
 ձանն է , որուն վրայօք նոյն ժամանա

(1) Այս ռուհիջան այլ է 'ի ռուհիջանայ վա
 նեցւոյ որ կենդանի էր 'ի վախճան կաթողիկոսին .
 այլ առաջին ռուհիջանն էր որդի Եաղուպճանի ,
 այլ այս ռուհիջան և Երեմիա երեւի թէ ՌՃԶ .
 Թուին հանգիստեալ է 'ի յԱմիթ քաղաք Սահակայ
 Կաթողիկոսի , որ կամէր առանձինն Կաթողիկոս լի
 նել Օսմանեան Տէրութեան հայոց որ ոչ յաջողե
 ցաւ :

կի համազգայիններէն անուպայ անձինք
ոմանք նախանձելով իրեն խաղաղասէր
վարուցը և տանաբանութեանցը վը-
րայ սուտ զրպարտութիւններ ընելով
Բ. Դուռը բողբոջին ըսելով Թէ
Փանկայեալէ. բայց նա չընդունելով
խոտովանեցաւ իւր լուսաւորչական
դաւանութիւնը և Հայստանեայց
կաթուղիկէ սուրբ եկեղեցւոյ հա-
րազատ որդի ըլլալը. ուստի Դուռն ալ
անոր վըայ եղած ամբաստանութիւնն ալ չըն-
դունելով ուղեց որ իրենց Գէնը ընդունել
պալով առիթմը արշալի ղերանէն. իսկ նա

յանին լաւելլով նահապաղեցաւ ՚ի Ռուսի հա-
յոյ ՌՃԾԶ :

Ետք ստոյգ պատմութիւնը Սուրբ
Գէորգայ գանձարանին մէջ անեղծա-
նելի կայ հանգերձ նամակաւն և այլն,
զորն որ կը յուսանք որ հրատարակե-
լու կը բարեհաճին նոյն եկեղեցւոյ
հոգաբարձուք մեր ազգին վրայէն տա-
րակոյսը վերցնելու համար. ինչու որ
ոմանք երանելին իրենց պաշտպան
կացուցանելու նպատակաւ անստոյգ
ու ստոյգօք պատմութիւններով իւ-
րացուցանել կուզեն :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Մով Հիբբօղիգայ :

Այն ինչ ՚ի դրանց Գուեղենեայ երանէաք խնդաբին,
Նա Հիբբօղիգ յիւրն ՚ի կառս բազմեալ վսեմ հայրենին.
Իւր անձնապահք վշտագնեալ շուրջ բոլորէն նազելւոյն,
Օհետ երթեալ լուսութեամբ գիւցածնունդ պատանւոյն,
Խոր մտածմամբ յառաջէր ՚ի Սիւնեայ գէպ յուղին,
Ձեռք իւր յահեղն ՚ի նժոյգս կալեալ ՚ի թոյլ սանձ նոցին.
Այն երիւրք խրոխտապանձք աշխուժութեամբ ակաղձուն,
Որպէս երբեմն պանծային հլու ձայնին վեհաղուն.
Իսկ այժմ աչկունքն այն տխուր, գլուխք ՚ի խնարհ կան հանդէպ.
Ոհ թէ կարծես նշմարէն զներկային թախիժ դէպ :
Եւ զինչ յալեաց փրփրադէզ դռաց գոչեաց պաղաղի,
Օանդորրութիւն ՚ի պահուն կորոյս երկինք զիւր միակ :
Եւ ՚ի խորոց անդնդոց քստմնասարսուռ ձայն ահեղ,
Պատասխանեաց հեծութեամբ աղաղակիս յայն ետեղ.
Սինչ ՚ի կուրծք և յախոնդիս արիւն յերակս մեր սառին,
Եւ մտադիւր նժոյգաց բաշք ՚ի գանգուր ծածանին,
Ահա ՚ի դաշտ կապուտակ լուծականին խրոխտապանձ,
Փրփրադէզ բարձրանայ լեառն ինչ ՚ի ջուրց վերհամբարձ.
Ահեղ կոհակըք մերձին, հանդէպ աչաց մեր ժայթքէն,
Օվեթխարին անողորմ գաղան հրէշ ինչ անդէն.
Ճակատ ղենեալ ՚ի վրիժակս հէգ մարդկութեանս ահարկու,
Ողջոյն մարմին իւր պատեալ դալուկն ՚ի թեփ լու ՚ի լու :
Նպարտելի ցուլ անսաստ վեշապ ահեղ սանձարձակ,
Գաւակ նորին գալարեալ դառնայր դառնայր խոտորնակ :

Լհեղ մունչիւն թունդ 'ի թունդ զեղերս ծովուն տատանէր ,
 Երկինք վերուստ զամեհին 'ի մեծ սոսկումն նշմարէր ,
 Թնդայ երկիր , և բնուածիւն , և սիւգ հեղիկ խռովին ,
 Ըլքն յոխորդ որ զայն ած , ահիւ մեծաւ կան միջին .
 Ըբք տեղի տան ամենայն ունայն 'ի զէն արուածեան ,
 Ի մերձակայս տաճարին տեղի խնդրեն թաղստեան :
 Լոկ Հիբբովիդ գիւցաղնի որդի այն արժանին ,
 Կացուցանէ զերիվարս , զտեգն առնու 'ի ձեռին ,
 Յանգուլթ գաղան շէշտակի թափ անցանէ իւր գեղարդ .
 Եւ 'ի կողին բանայ վերս պատառոտեալ յակնթարթ :
 Ըռ զայրոյթ իւր և վշտաց վերաքն ահուր սարսափեալ ,
 Հանդէս այն սեգ նժոյգաց գահ անկանի բորբոքեալ .
 Ընդ թաւալեալ զիւր բերան ցուցանէ այնց 'ի մունչիւն ,
 Օրբս ծածկէ 'ի պահուն 'ի հուր 'ի մեգ և յարիւն .
 Սոսկումն ահեղ զերիվարս ունի անդէն 'ի սարսուռ ,
 Որք ոչ անսան ձայնատուն , ոչ սանձ զոպէ ոչ անուր ,
 Իսկ Տէր նոցին գիւցաղունո ձիգ զօրութեամբ իւր ջանայ ,
 Ի գոյն կարմիր կաղմածովք ներկի յարիւն անխնայ .
 Ի խռովութեան ահաբին երևեցաւ ասի թէ
 Ոմն յստուածոց փոշտեալ , և զկողս նոցին տռ խըթէ :
 Ընդ ափափայս շաւակի անա՛ ընդգէմ խիզախեն ,
 Լիսեռն անուոյ բեկանի , և քաջաղունն 'ի գահէն .
 Ընդ տեսանէ զիւրն զկառս 'ի շառաչիւն խորտակեալ ,
 Ընքն 'ի բեկորս անկանի անդէն 'ի սիրտ շփոթեալ .
 Ներեա՛ ինձ , Տէր , իմ ցաւոց դառնակսկիծ այս պատկեր ,
 Լիցի այն յաւիտեան ցաւոց վշտաց ակն աղբեր .
 Օրբերդ տեսի այն Տէր զորդիդ թշուառ նաղելին ,
 Ընդ քարշ ածեալ նժոյգաց զորբս ձեռք իւր սնուցին :
 Չայնէ զնոսա առ 'ի կալ և երկուցեալ 'ի ձայնէն ,
 Ըրադրնթաց արշաւեն վերք զմարմինն համբուրեն :
 Լալահառաչ 'ի ձայնիցս անտառք հովիտք սարսեցան ,
 Շարժմունք նոցին սուրարշաւ արդ հուսկ յետոյ ծանրանան :
 Օկայ առնուն ոչ 'ի բայ 'ի հինաւուրց 'ի շիրմաց ,
 Ըճիւնացեալ ոսկերաց ուր են նշխարք նախահարց :
 Սեծ հառաքմամբ արշաւեմ և անձնապահք իւր ընդիս ,
 Կաթիլք արեան անարատ մեղ կարապետ 'ի շաւղիս ,
 Ներկեալ յարիւն դարեանդք մայառք անյագ յարենէն ,
 Օարիւնալից իսկ զհերս գլխոյ վեհին այնք կրեն .
 Հասաք ահա 'ի տեղին ձայնեմ զորդիդ աննման ,
 Ըկըն մեռեալ բաց միայն փակեաց զնա առ ժամայն .
 “ Երկինք ասէ , կեանս անաբոտ կորդէ յինէն յարակայ .
 Հայրագորով տար խնամս , վայելքն հոգւոյս Լուսեայ ,
 Թէ զսալանս գիւցաղուն ճանաչիցէ հայր իմ զիւր :
 Ի՛ննիցի 'ի սուգ դառնաղէտ յամբաստանել իմ 'ի զուր .

Առ ՚ի մեղմեւ զարիւն իմ՝ և զիմ ցնորս ցաւագին ,
 Ասա վարիւ ընդ գերւոյն Աւետենեայ քաղցրագին ,
 Եւ հատուցէ ՚ի բառիս փշեայ զտբիս քաջազուն ,
 Ի մէջ բազկացս միայն թող զմարմինն պատանդ սիրասուն :
 Տեսիլ տխուր , բարկութեան զոր սոյառնայ վեհից դեց ,
 Եւ աչք անգին հօր սիրոյ ոչ ճանաչէ բարեւից :

Նիկողայոս կայսեր մահուան նկարագրութիւնք :

Վեհափառ Նիկողայոս կայսրը երկար ժամանակէ հետէ հազմը ունեւնալով , այս միջոցիս կը սաստկանայ , որ ատեն իրեն հաւատարիմ բժիշկը կաղաչէ , որ իրեն հոգ տանի՝ և մէկ քանի օր դուրս չելայ . իսկ կայսրը բռնաբան զուրկածը բանի տեղ չդնելով իրեն գործին կը պարագայէր : Ասանկ քանի մը օր անցընելէն ետեւ , բժիշկը կը տեսնայ որ կայսեր հիւանդութիւնը օր օրուան վրայ կը գէշանայ կ'սէ իրեն , Տէր Աբբայ ներէ համարձակութեան՝ ըստորում պարտականութիւնս է ձեզի իմացնել . թէոր ատանկ մեծ հիւանդութիւն մը հասարակ զինւորի մը պատահելու ըլլար , ՚ի հարկէ հիւանդանոցը կը տարուէր . կաղաչեմ հաճեցէք դուրս չելալու և պէտք եղած դարմանը ընելու . իսկ կայսրը կը պատասխանէ անոր , շնորհակալ եմ քեզնէ , և ինչպէս որ դուք ձեր պարտաւորութիւնը ճանցաք ու ըրիք , պէտքէ որ ես ալ իմ պարտաւորութիւնս ճանչնամ և երթամ իմ բանակիս պիտոյքը հոգամ : Այս խօսքիս վրայ իսկոյն կառքը պատրաստել տալով՝ կերթայ իւր գործին պարտպելու . և որչափ որ ինքըզինքը պահպանէր և աղէկ զգուշութիւն ըրէր էր ալ նէ . քիչ շատ ցուրտ առնելով վնասուէր է : Պալատը դարձած ատենը կայսրուհոյն կիմացնէ , որ սաստիկ յոգնութիւն մը կը դրայ իր վրայ՝ ու կըսէ , որ իրեն դարմանելու հոգ

տանի : Կայսրուհին սովորական դարմանները ընելէն ետքը կը տեսնայ՝ որ հիւանդութիւնը ուրիշ ատենուան պէս թեթեւ անցնելու բան չէ , անկողինին վրայ պառկել կուտայ , որ կըսեն թէ՝ պատերազմի ատեն ապուշ խարանք սեպելով անհանգիստ մնալու համար անկողինն ու գլխի բարձը կաշիէ շինուած ու մէջը խոտով լցուած է եղեր : Ինչ և իցէ բժիշկը կուգայ կը տեսնայ՝ որ հիւանդութիւնը սաստկացեր է , ուրիշ բժիշկմը նալ կուգէ իրեն հետ խորհրդակցելու . երկուքը մէկ տեղ կըսկրսին քանի մը ժամ խօսիլ հիւանդութեանը վրայ . և վերջապէս կ'ըսեն որ հիւանդութիւնը անոյս է . վասն զի լերգին վրայ կաթուածի (տամբայի) նշան մ'ալ կը տեսնան . ուստի բժիշկը կը մօտենայ կայսեր և կուգէ որ կերպով մը իմացունէ հիւանդութեան վտանգաւոր ըլլալը : Իայց արթուն կայսրը ինքնին բժիշկին ըսելիքը զգալով կըսէ թէ հիւանդութիւնս անոյս կերեայ և լերգիս վրայ կաթուածի նշան մը կ'իմացվի . ուրեմն պէտքէ որ մահուանըստ պատրաստութիւնը տեսնեմ . շուտ քահանան կանչեցէք : Քահանան կուգայ՝ և կայսրը կատարեալ զղջմամբ կը խոստովանի , և քրիստոնէական ջերմեռանդութեամբ վերջին թոշակը կ'առնէ : Ետքը կայսրուհին կը կանչէ կըսէ . մի այլայլի՝ որովհետեւ անմահ չէնք ՚ի հարկէ օր մը պիտի մեռնինք . բայց Աստուծոյ արդար կամեցողութիւնը այսօր կը կոչէ զիս , հարկաւ

միջոցիս կայսրուհին և բոլոր ընտանիքը կողքան անոր վրայ բայց ինքը ուրախ անխռով բոլոր հին թիկնապահները կը կանչէ քովը և անոնց ալ վերջին հըրաժարական ողջոյնը կուտայ ըսելով. շնորհակալ եմ ձեզից որ շատ պատե-րազմներու մէջ Մատուածոյ ողորմու-թեամբը օգնական եիք ինձի . ինչպէս որ 1825 ին հայրենեաց աղատութեան համար ձեր կեանքը չի խնայեցիք . ձեր անձը իմ անձիս պահպանութեանը համար զոհել կուղէիք . ուստի շնորհակալ եմ ձեզից երախտագարտ սրբա-տիւ . մնաք բարով ես կերթամ, մէյ-մալ չեք տեսնար զիս . միայն կը խնդ-րեմ ձեզից որ իմ որդւոյս Ղզեքսան-րին հոգ տանիք . բարի խրատներ ապք իրեն , քրիստոնէական առաքինու-թեամբ զարդարվելու յորդորէք . վասն զի դեռ խակ է և ձեր օգնութեանը կարօտ . նորէն կըսեմ մնաք բարով, եթէ պակասութիւն մը ըրած ունիմ նէ թողութիւն շնորհելով ներեցէք : Բոլոր թիկնապահները գետինը խնա-լով, մեղանք քաւ լիցի Տէր Աբբայ , մենք պակասութիւն կընենք ձեր վեհափա-ռութեանը առջին կըսեն , ու լալով կը մեկնին : Ա երջին անգամ կը կանչէ քահանան և վերստին խոստովանելէն ետքը առանձին ծուռնկի վրայ կուգայ կըստի բարձր ձայնիւ աղօթել ու սաղմոսել . և աչքերը դէպի երկինքը վերցնելով կըսէ . « տէր Աստուած քու արդար կամեցողութեամբդ մինչև հի-մայ այս տէրութիւնը կառավարեցի , հայրենիքս պաշտպանեցի ինչպէս որդի-տես թէ իմ բոլոր աշխատութիւնս քու ժողովրդեանդ և քու եկեղեցւոյդ փա-ռաւորութեանը համար էր . և եթէ պակասութիւն մը ըրի ալ նէ քու ան-հուն ողորմութեամբդ ներէ իմ յան-ցանքիս , որ բոլորով սրտիւ մեղանք կը գոչեմ : »

Ասոր նման ուրիշ աղօթքներ ալ ընե-լով իր մեղքերուն վրայ կը զղջար և

թողութիւն կը խնդրէր բարձր ձայ-նիւ : Բայց ընտանիքը դուրսը հեկե-կալով կուլային և դռնէն մօտիկ կընե-ին . տեսան որ կամայ կամայ ձայնը կը նուազի . նէրս կը մանեն որ անդադար երեսը կը խաչակնքէ և բերանը կը շար-ժէ : Հանկարծ վերջին ծիգը թափե-լով կելոյ ծուռնկի վրայ կը նստի և բո-լոր ընտանեացը հրաման կընէ որ ծուռ-նկի վրայ գալով աղօթք ընեն իրեն հա-մար : Ա երջը քահանային կաղաչէ որ վերջին թողակը տայ . քահանան մօ-տեցած ատենը սիրտը կը շարժի կրու-կըսի լալ . բայց շուտով մը ինքզինքը կը ժողվէ ու օրհնեալ ես Աստուած ըսելով աչքերը կը սրբէ , ու կատար-եալ ջերմեռանդութեամբ նորէն կը հաղորդի : Ա երջը կայսրուհին Ղզեք-սանդը և Կոստանդինը երեքը մէկանց գրկելով անոնց սրտին վրայ կաւանդէ հոգին : Եւ ով կրնայ պատմել բոլոր քաղաքացւոյ լացն ու ողբը որ ամէն տուն մեր հայրը , մեր բարերարը մե-ռաւ ըսելով, կուլան անմխիթար . կու-լան իրենց հայրենեաց պաշտպանը , մեծ սուգ պահելով :

ՅԱՒԱՆԻ ԴԷՊՔ ՄԵ՛:

Երկու օր անցաւ , և թէև Պա-րոն Արդօնի տիկինը իւր երկանը ու զաւկին բացակայութեամբը մինակ մնաց , բայց ինքզինքը իւր առտընին գործքերովը կըզօսցընէր անոնց դար-ձին ակնկալու եղած . և քանի որ իւր պղտի սիրուն Եղուարդին զար-մանալեքները միտք կը բերէր , անձ-կալի սիրտը կեփէր անգամ մը անոր երեսը տեսնելու : Երրորդ առտուան լուսնալէն առաջ դժբախտ կինը՝ հովին ու անձրն ին պատուհաններուն ըրած սաստիկ ու ուժգին ձայներէն ստեղ-լի քունէ մը արթնցաւ և հովին փո-

ԶՈՒՆՐԱՆԻՒՅ

ԱՐԶԱԳԱՆՔ

Կամ ոչ որ ուզածը կցուի
չուցածն ալ կց չուի :

Պրտիկ տղայ մը , որ արձագանքի վրայ տեղեկու-
թիւն չունէր , օր մը իւր մայրը դաշտը խաւրց եր-
թալ փնտռել իր հայրը՝ որ մօտակայ բլրի մը այգիներ
բուն մէջ կը բանէր : Աստղան որովհետեւ շատ խա-
ղող կը սիրէր , առանց յայտարարելու վաղէց գնաց այ-
գին , բայց հոն իր հայրը չի գտու . վասն զի ու-
րիշ ճամբայէ մը տուն էր դարձեր : Ուստի խաղող
ուտել սկսաւ և այգիին մէկ ծայրէն միւս ծայրը սը-
տորելով՝ աղէկ մը կշտանալէն ետքը սկսաւ պօռալ ,
հօք հօք , մէկէն ուրախալի ձայն մը իրեն պատաս-
խանց քովն անտառէն հօք հօք : Պրտի տղան չգիտ-
նալով իրեն այսպէս պատասխանողը՝ նորէն պօռաց ,
« Ո՞վ էսո՞ ձայնն ալ պատասխանեց , « Ո՞վ էսո՞ . ան ատեն
տղան համբերութիւն կորսնցուցած ըսաւ . « Իսկե՞ր էսո՞
ձայնն ալ ծաղրելի կերպով մը կրկնեց « Իսկե՞ր էսո՞
— յ Սրիկայ էս՝ « Եւ ձայնն ալ պատասխանեց . . .
կայ էս՝ » : Այս շարունակ կրկնութիւններէն բար-
կացած՝ տղան ձեռքը դաւաղան մը առաւ , դէպ
ի անտառը դիմեց որ ծաղրածու սրիկային արժա-
նաւոր պատիժ մը տայ : Երբոր անտառին բերանը
եկաւ իսկոյն կանդ առաւ որ դուցէ ծաղը առնող
սրիկան վերքը տեսնելով վախնայ , ու պօռաց . « Հո՞ն
էսո՞ ձայնն ալ պատասխանեց էս . . . է՛ս . . . է՛ս » :
Այս կարծեցեալ անծանօթ մարդուն յանդգնու-
թիւնը տղան այնչափ բարկացուց որ ալ բերին
եկածը դուրս կուտար . բայց որչափ որ իւր համ-
բերութիւնը կը կորէր , նոյնչափ ալ կարծես թէ
ձայնը ծաղրելի կերպով մը իւր ըսածը կը կրկնէր :
Աւելիկոցաւ ինքզինքը զսպել , ձեռքի դաւաղանը
վեր վերցուցած , անտառը սլորորտեցաւ գտնալու
այն ժամը , որ զինքը այնչափ կը բարկացնէր ,
բայց ունայն տեղը չորս կողմը վազվզեց , մարդ մը
չի կար հոն : Տունը դարձաւ ու պամեց իր մօրը թէ
պրտիկ սրիկայ մը անտառին մէջ պահվտելով իւր
բոլոր ըսած խօսքերը ծաղրելով կը կրկնէր : Մայրը
ինքզինքը պատասխանեց , « աս անգամ աղէկ խաբ-
վեր էս ու պատժը վեր էս ալ . դուն կարծեցիր թէ
այդ նախատական խօսքերը ուրիշ մը ըսիր ,
բայց քեզի ըսած էս . չէ՞մի որ նախ և առաջ ըսած
խօսքերուդ կրկնուիլը լըսեցիր , ինչպէս որ երբ պոյ-
ծառ լըցո մէջ նայելու ըլլատ քու կերպարանքդ մէ-
ջը կանդարդարձէ , ասանկ ալ արձագանքը քու խօ-
քերդ միմակ կրկնած է . թէ որ պարկէշտ խօսքեր
ըսած ըլլայիր , նոյնը պիտի լսէիր . հարկաւ նախա-
տական խօսքեր ըսեր էս , որ արձագանքն ալ նոյնը
քեզի կրկնէր է : Ահա այսպէս է աշխարհին մէջ ալ ,
մենք ինչ որ ընենք մարդոց , անոնք ալ մեզի նոյնը
կրկնեն , թէ որ անոնց հետ քաղցր և պարկէշտ կեր-
պով վարվնք , անոնք ալ մեզի քաղցրութիւն և յար-
գանք կը ցուցնեն , թէ որ ընդհակառակն , ա-

նոնց հետ կենցաղավարելու ատեննիս կոշտ ու կո-
պիտ խօսքեր դարձած ենք , անոնք ալ մեզի նոյն կեր-
պով կը պատասխանեն , ասոր համար է որ Յիսուս
Քրիստոս իւր Աւետարանին մէջը ըսաւ « Ինչ չա-
փով որ ուրիշներ չափէք , անով չափիլք պիտի դուք
ալ » : Այս , իմ փոքրիկ բարեկամս , թէ որ կուզենք
որ մարդիկ մեզի հետ աղէկ վարվն , ջանանք նախ
և առաջ իրենց պատուոյն արժանի ըլլալ , անտառէն
միայն իրենց յարգանքը կրկնեք վատըկիլ » :

Տղան մօրը խրատը աղէկ մը միտք առնելով՝
խօստուցաւ որ ալ անկէ ետքը մէկու մը նախատա-
կան խօսքեր չի զրուցէ . և ոչ ալ իւր հօրը այգիին
մէջ այնպիսի խօսքեր պօռայ որպէս զի չըլլայ թէ ա-
սանկով անպարկէշտ և անկիրթ տղայ մը համարվի :

Աղբիջ ամուսն հանելուկին բացատրութիւնը :

Աղբիջ Ամուսն Հանելուկին Սեփաւիճոյ էր ,
որն որ քանի մը Պարոններ գլտան , բայց առաջ
այս հետեւեալ նամակը մեզի գալով արժան դատե-
ցինք զանի հրատարակել :

Մեծարգոյ Անդամք Մտորպեան Ընկերութեան :

Աղբիջ ամուսն ձեր պատուական Օրագրին միջը
ցաւ հրատարակած հանելուկներից Սեփաւիճոյ կը նը-
շանակէ , որուն բացատրութիւնը այսու գրութեք
կը փութամ իրիկէ ձեր Անուստութեանցը , յու-
սալով , որ զանիկա յառաջիկայ թերթերուդ մէջ
կը հրատարակէք , որն որ նուաստութեանս մեծ պա-
տիւ կընէ :

Պարըսպաւոր քաղաքն այն ,
Իւր նիստ ունի յեզերս Պոնտեան .
Որուն՝ զօրքերն վէհ դաշնակցաց ,
Յանկան տիրել իրենց ի պանծ ,
Ահեղամուռն յորոգ ծովուն ,
Սեփաւիճոյ է իսկ համբուն .
Ուր Բուսից գահ պանծալի ,
Յամէն ուրեք մեծ տեսանի :
Բայց կը յուսամ որ քիչ օրէն ,
Անշուշտ կըլլայ աւեր անշն ,
Քաջ լըքերէն մեր Օսմանեան ,
Եւ Գաղղիոյ , Անգղիական :

Մնամ ձեզ միշտ բարեկամ և
փափաքող յառաջադիմութեան ընկերու-
թեան և Օրագրին ձերում :

1855 Ապրիլ 11

ՅԱՐՈՒԹԻՒՆ Պ . ՍՏԱՄԳՈԼԵԱՆ